

84. ԷԼԸ ՊԵՐԱՎ, ՍԵԼԸ ՊԵՐԱՎ

Թա՛ ինըմ ա, թա՛ ինըմ չի, ոչ ով կարալ չի գիդա՛, համա դե օղորմածիկ պապիս ասել ա, ես էլ լսել եմ, որ մին հարուստ բեգ ա ինըմ, ըստան էլ մին չարմաղ ախճիկն ա ինըմ: Դե ով չի գիդըմ, որ ախճիկը ուրիշի տան ճրաք վառող ա, ըտրա մհար էլ բեգը հանմաչա՛ մթնըժոռած միտկ ա անըմ, թա՛ ուրա՛ ախրը ինչ ա ինիլու:

Ախր, մարթիս որ տղա չի ինըմ, գիդա՛ որ օջաղի ծուխը կըտրված ա:

Սըհենց մին օր էլ բեգը ման կալիս ա ինըմ, եփ կեղերիցը մինըմը մին եթիմ տղի ա ռաստ կալիս: Որ գիդըմ ա՝ էս տղեն ո՛չ հեր ու մեր, ո՛չ էլ քիր ու ախպեր ունի ոչ, ուրա՛ չոր կլոխն ա հու ինքը, վեր ա ունըմ պերըմ ուրա՛ն նոքա՛ր: Եթիմըս էլ էնքամ խելունք, էնքամ էխչով ա ինըմ, որ ինչ կոռծի ծեռ ա տալիս էն սըհաթին կոռծը կլոխ ա կալիս:

Բեգն էլ էս եթիմին հալալ տղի մնան ա եչըմ: Հացի վախտը կանչըմ ա, կըշտին նըստըցնըմ, ըշտեղ քինըմ ա, ախճկա մհար չորը-մոր պերիլիս ըստրա մհար էլ ա պերըմ:

Եթիմի տըսնօխտը տարին որ թըմամըմ ա, մին նհենց բոյով-բուսաթով, նհենց քախծրարին ջահիլ ա տառնըմ, որ հեր ու ախճիկ հայիլ-մայիլ են կտրըմ: Ախճիկը էն օրը, որ նոքա՛րին տեսնըմ չի, ճուտը կորցրած մարալի մնան սաղ օրը մըզզըմ ա, ծեռը փըռնըմ չի, թա՛ մին կոռծ անի, էյվանըմը նըստըմ ա, աչկը զիլլամիչ անըմ ընդա քինացած ճընապին, թա՛ եփ ա իրևալու:

Հերը որ տեսնըմ ա ինչն-ինչոց ա, եթիմին կանչըմ ա հու ասըմ.—Ա՛յ բալամ, տո՛ւ իմ սրտին էնքան ես տուր եկել, որ քե հըրազադ հոր մնան սիրըմ եմ: Եկ քե փսակեմ, բալքի տո՛ւ իմ օջաղի ծուխը ծխես: Թա՛ ուրիշ ախճիկ կարըմ չես ճարես, իմ ախճիկը՝ քե հալալ:

Տղեն էլ թա՛.—Ա՛յ հերացու, ախչարքըմըս քու ախճկանից լավը տըժա՛ր թա՛ ճարվի, համա դե սար ու ծո՛ռի թաբաղութ կա մեր մեջին: Բեգի ախճիկը՝ հո՞ւր, նոքա՛րը՝ հո՞ւր: Դո՛ւզ ա, իմ մըտկըմըս էլ կա, որ փըսակվեմ, բա որ հալա՛ ոչ տուն ունեմ, ոչ էլ մալ ու մո՛ւլք, ո՞նց անեմ:

—Համա ասեցիր, հա՜, ա՛յ բալամ, բա իմ իլածը ո՞ւմն ա: Էն ա քունն ա, էլի:

—Զէ՛, ա՛ հեր, քու իլածը քունն ա, քու ախճրկանն ա, ես իմ հալալ քրտինքովը ախչադածի մասի եմ խոսում, դե որ ուզում ես ինձ փսակես, ամաչգրտ ինձ հալա՛լ արա, մին խելի վախտ իզ թո քինամ, ախչարք ման կամ, բախտըս փորցեմ, թա բախտըս պերավ, իլածչիլածի, մալը-մուլքի տեր տառամ, էլի կըկամ, կըփսակես: Օրթում եմ ուտում, որ հուր էլ քինամ, ըշտեղ էլ ինեմ, քու տունը իզ մհար կըմնա հերանց տուն, ետ կըկամ:

Բեգը խելաք փող ա ուզում տա, համա նոքարը մինակ ուրա ախչադածի հախն ա վեր ունում, քինում: Շատ ա քինում, թա քիչ, Աստոծ գիդա, մին սարով աս կենալից ա ինում, տենում ա՝ հեսա մին բոլուգ ոխճար ա ըրածում, համա ո՛չ չորան կա, ո՛չ էլ ուրիշ աչկ ածող: Մին քանի օր մնում ա բոլուգի կըշտին, վերչը որ տեր չի տուս կալիս, առաչն ա անում, քշում ուրանց սարերը: Ըստեղ մին չորան ա փըռնում, բոլուգը տալիս ընդան, ինքը թազադան քինում ա ուրա բախտի ենիցը:

Ման ա կալիս, իշքան կարում ա, քինում ա ընդեղ ըշտեղ աչկը փըռնում ա:

Շատ որ քինում ա, տեմ ա առնում մին խոր ծորի: Սելը էս ծորը բարբաղ արած ա ինում, ճընապեն քանդած, կըտրած: Տես ա տալիս, տեն ա տալիս, վերչը մին կեծան ա ճարում, վեր կալիս ծորը, որ աս կենա էն մին ղոլը, տենում ա ծորի տակին հեսա մին կարքին մեծ պուլիկ ա ընգած: Ափսուզը կալիս ա, վեր ա ունում, տենում ա՝ ոսկով լիքն ա:

Ուրախութունիցը պապար ա անում, պուլիկն առնում ա, ետ կալիս: Էլ ըտանա լավ բախտ ըշտեղա՞ն պըտի ճարեր: Ետ ա կալիս, տենում՝ ուրա ոխճարի մին սուրուն էրկու ա տառել: Զոբանին երկուտակ փող ա տալիս, թափչուր անում, որ լավ պահի ոխճարը, ինքը կալիս ա, բեգի քավչանի ղրաղին մին ղաչանգ տուն չինում, էդով քինում բեգի կուչտը:

Բեգը որ տենում ա տղացեղը սաղ-սալամաթ ետ ա եկել չատ ա ուրխանում, եդով հըրցընում ա.—Հը, բալա՛ ջան, բախտըտ ճարա՞ր:

—Ճարա, ա՛ հեր, մհիկ տուն էլ ունեմ, մալը-մուլք էլ: Թա ախճիկըտ ռազի յա իմ տան ճրաքը տառնա, ես իմ բախտիցը կանգատ չունեմ:

Ախճիկը էս որ լսում ա, վազ ա տալիս, փըթաթվում ա տղի վզովը, թա.—Ըշտեղ տու, ընդեղ էլ ես, ի՛մ աչկի լիս: Իմ մուրազը տու ես իլել, տու էլ կաս: Քեզանա գումանն ոչ ով ունեմ ոչ:

Բեգը փսակրմ ա ըստանց: Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ա անըմ, եղո առոք-փառոք պերըմ տղի տունը:

Եվ տենըմ ա եթիմի ղաշանգ տունը, ոխճարի բոլուգնին, մնըմ ա արմանք-զարմանք կըտրած:

—Էսքան իլածը ըշտեղա՞ն ա:

—Ես բախտավոր աստղի տակի եմ ծնվել, ա՛ հեր, աստըղըս քու ախճիկն էր, մալըս էլը պերավ, մուլքըս՝ սելը,—ասըմ ա եթիմը, պատմըմ, թա էտ ոնց ա իլել, եղով էլ ինքն ուրա մհար ա օխտն օր, օխտը քըշեր հըրսանիք անըմ:

Պապիս ասըմ էր, որ էտ հըրսընքովն ինքն էլ ա մակառ իլել, կուշտ ու կուռ կերել ա, խմել, քեփ արել, համա սոված ա քնել: